# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | Հիմք նյութ՝ արույր Միջանկյալ շերտ՝ նիկելապատում, նիկելի հաստություն՝ 6–8 միկրոն Վերին շերտ՝ 999 հարգի արծաթապատում, արծաթի հաստություն՝ 8–10 միկրոն Թույլատրելի նվազագույն հաստությունից ցածր շերտավորմամբ ապրանքը ենթակա է մերժման: Պարտադիր է կիրառել հակաօքսիդացիոն պաշտպանիչ շերտ կամ թափանցիկ լաքապատում՝ արծաթի օքսիդացման, սևացման և գունաթափման կանխարգելման նպատակով: Պատրաստի մեդալի մակերեսը պետք է լինի կատարելապես միատարր, հարթ, առանց բծերի, քերծվածքների, ծակոտիների, մութ կետերի կամ երանգային (գունային) տարբերությունների: Տրամագիծ՝ 50 մմ ±1% Հաստություն՝ • ռելեֆի ամենացածր հատված՝ 3.2 մմ ±1% • ամենաբարձր հատված՝ 4.4 մմ ±1% Քաշ՝ 70 գ ±0.5 գ Երկկողմանի դիզայն՝ համաձայն նմուշի: Մեդալի բնօրինակը (նմուշը) տրամադրվում է պատվիրատուի կողմից, որի հիման վրա մատակարարը պետք է մշակի և ներկայացնի արտադրական էսքիզը՝ նախապես համաձայնեցման համար: Էսքիզը ենթակա է վերջնական հաստատման պատվիրատուի կողմից մինչև |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | արտադրության մեկնարկը: Մեդալի սկավառակի եզրերը պետք է լինի հարթ, որտեղ լազերի օգնությամբ փորագրված պետք է լինի հերթական համարը (հերթական համարների ցանկը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ): Մատակարարվող հուշամեդալներն անզեն աչքով պետք է չտարբերվեն բնօրինակից: Հուշամեդալը պետք է անշարժ դրված լինի թափանցիկ ակրիլային հումքից պատրաստված կապսուլայի մեջ, որն իր հերթին պետք է դրված լինի տուփի մեջ: Տուփի վերին մասը պետք է ունենա սերտիֆիկատը պահող ժապավեն, իսկ ներքևի մասի կենտրոնում պետք է ունենա հուշամեդալը կապսուլայով ամրացնելու հնարավորություն: Տուփի չափսերն են՝ լայնություն 9սմ, երկարություն 9սմ, հաստություն 3սմ: Տուփի թե՛ արտաքին, թե՛ ներքին մակերեսները պետք է պատված լինեն բարձրորակ կապույտ վելվետային գործվածքով, որն ապահովում է ներկայացուցչական (պրեմիում) տեսք և հուշամեդալի լրացուցիչ պաշտպանվածություն: Տուփը պետք է ունենա հատուկ ձևավորված խորշ՝ 50 մմ տրամագծով հուշամեդալը կապսուլայով հանդերձ անշարժ և ամուր ֆիքսելու (ամրացնելու) հնարավորությամբ: Փակում՝ մագնիսային (թաքնված մագնիս), ապահով և հարմարավետ փակման համար: Յուրաքանչյուր պատրաստի տուփ (ներսում գտնվող կապսուլայով և մեդալով հանդերձ) պետք է անհատականորեն փաթեթավորված լինի պոլիէթիլենային տոպրակի մեջ: Մեդալի երաշխիքային ժամկետ՝ 24 ամիս, որի ընթացքում Մատակարարը պարտավորվում է վերացնել թերությունները կամ փոխարինել այն ապրանքը, որի մոտ առկա է արծաթապատ շերտի գունաթափում, օքսիդացում կամ շերտազատում՝ նորմալ պահպանման պայմաններում: Երաշխիքը չի տարածվում մեխանիկական վնասների, քիմիական ազդեցության կամ ոչ պատշաճ պահպանման հետևանքով առաջացած փոփոխությունների վրա: Կատարողը պարտավորվում է իր հաշվին և ուժերով վերացնել հայտնաբերված բոլոր վերոհիշյալ թերությունները (իրականացնել կրկնակի մշակում և պատում)՝ Պատվիրատուի կողմից ծանուցումն ստանալուց հետո |

| | | | |
|---|---|---|---|
| | | | առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թաքնված դեֆեկտների (օրինակ՝ լաքի տակից արծաթի հետագա սևացում կամ շերտավորում) դեպքում, Կատարողը պարտավորվում է անվճար վերականգնել կամ փոխարինել տվյալ մեդալները նույն ժամկետում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | |